

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ր

Պ. Սիմէօն Առաքելեան Առաքիւեանը Բաքուի դորժակալ Տ. Եղիշէ աւագ քահանայ Գեղամեանի ձեռքով սւղարկել է Մայր Տաճարի յատակին փռելու համար 510 արշին փսիւթ:

Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Ղեանդ Եպիսկոպոսը ընդունելով յիշեալ նուէրը՝ յայտնում է նուիրատուին իւր շնորհակալութիւնն ու օրհնութիւնը:

Կ Ո Չ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը ներկայ 1911 թուին բոլորում է իր դորձունէութեան երեսնամեակը, Ընկերութեան կանոնադրութիւնը հաստատուած է 1871 թուին, իսկ առաջին ընդհանուր ժողովը տեղի է ունեցել նոյն տարուայ նոյեմբերի 15-ին: Թէ սրպիսի նպատակ ունի յիշեալ պատկուելի ընկերութիւնը հայկական կեանքում, այդ մանրամասնօրէն նկարագրուած է նրա յօրեւեանական ատկերազարդ հրատարակութեան մէջ: Բաւական է յիշել որ նա մեր հայկական իրականութեան մէջ մեծ են շանաւոր կուլտուրական դեր է կատարում:

ա) Ներկայիս Ընկերութիւնը Կովկասում գտնուած հայկական բոլոր աչքի ընկնող վայրերում ունի 46 ճիւղեր:

բ) Թիֆլիսում պահում է սրբանոց, ուր սնւում են 33 որբ հայ աղջիկներ և որոնք ուսում են առնում հայկական դպրոցներում:

գ) Ունի հարուստ գրադարան, ընթերցարան, որոնցից օգտուում են ամիսը 3000 հօգուց աւելի անձինք:

դ) Պահում է աշակերտական ճաշարան, որից օգտւում են՝ օրական 300-ից աւելի՝ չքաւոր հայ աշակերտաշակերտուհիներ:

ե) Արժէքաւոր երկեր հրատարակելու համար ունի առանձին «Հրատարակչական ֆօնդ», որ կազմուած է Ա. Պօղոսեանի նուիրած գումարով:

զ) «Արովեան-Նազարեան գրական ֆօնդ» հայ գրականագէտներին նպաստելու համար: